ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» հունիսի 2014թ. N------ -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան քաղաքի Սիսակյան փողոց հ.22 հասցեի 31.44 քմ մակերեսով պոմպակայանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 02.10.2013թ. հ. 02102013-01-0136 վկայական) իր սարքավորումներով, համաձայն հավելվածի՝ մինչև 2016 թվականի մայիսի 31-ը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության, «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Օ-Քոմփանի Ժեներալ դեզ Օ» ընկերության միջև 2005 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված վարձակալության պայմանագրի պայմաններին համապատասխան շահագործելու նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2014 թվականի հունիսի ---ի
N--- - Ա որոշման

ՑԱՆԿ

§ºñ¨ ³Ýæáõñ¦ ö´À-ÇÝ **անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվող**
ºñ¨ ³Ý ù³Õ³ùÇ êÇë³ ÏÛ³Ý 22 Ñ³ëó»Ç åáÙå³ Ï³Û³ÝÇ ·áõÛùÇ

Ð/Ð	¶áõÛùÇ ³Ýí³ÝáõÙÁ	â³÷Ù³Ý ÙÇ³íáñÁ	Ì³í³ÉÁ	ØÇ³íáñÇ ³ñÅ»ùÁ	ÀÝ¹³Ù»ÝÁ
1	äáÙå³Ï³Û³Ý 2 åáÙåÇó Hydro Multi-S 2 CMV 5-9	Ï-ï	2	1450000	2900000
2	ÀÝ¹³ñÓ³ÏÙ³Ýµ³ù 750	Ñ³ï	1	320000	320000
3	´ñáÝ½»÷³Ï³ÝÝ»ñÆ 15ÙÙ	Ñ³ï	6	2000	12000
4	´ñáÝ½»÷³Ï³ÝÝ»ñÆ 32ÙÙ	Ñ³ï	2	3960	7920
5	´ñáÝ½» ýÇÉïñÆ 50ÙÙ	Ñ³ï	4	5000	20000
6	äáÕå³ïÛ³ ³Ýóáõ Ù 32*50	Ñ³ï	4	3500	14000
7	ÖÏ³ËáÕáí³Ï D32 Ñ³Ý·áõÛóáí	·Ù	3	1700	5100
8	ÖÏáõÝÙÇ³óáõÙ D 50	·Ù	4	650	2600
9	ÊáÕáí³Ï³ß³ñÇ ³ÝóÏ³óáõÙ åáÕå³ï» ËáÕáí³ÏÝ»ñÇó Æ 50ÙÙ	·Ù	6	4500	27000
10	Ð³Õáñ¹³É³ñäì3 1*4	·Ù	20	500	10000
	ÀÝ¹³Ù»ÝÁ				3318620

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քննարկվող նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Սիսակյան փողոցի 22 հասցեում գտնվող 31.44 քմ մակերեսով պոմպակայանն իր սարքավորումներով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության, «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Օ-Քոմփանի Ժենեռալ դեզ Օ» ընկերության միջև 2005 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված վարձակալության պայմանագրի պայմաններին համապատասխան շահագործելու նպատակով:

«Վարձակալության պայմանագիրը» մեկնարկել է 2006թ. հունիսի 1-ից: Հետագայում, «Վարձակալության պայմանագրի» գործողության 4-րդ տարում՝ ՀՀ կառավարության 2009թ. սեպտեմբերի 10-ի N1042-Ն որոշմամբ՝ «Վարձակալության պայմանագրով» նախատեսված ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն փոխարինվեց Երևանի քաղաքապետով:

Համաձայն «Վարձակալության պայմանագրի»՝ «Ժամկետի ընթացքում իրականացված կապիտալ աշխատանքների ավարտից հետո դրանց սեփականատիրոջ՝ Վարձատուի կողմից դրանք պետք է օգտագործման հանձնվեն Վարձակալին»՝ «Երևան Ջուր» ՓԲԸ-ին:

Այսպիսով, «Երևան Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքի Սիսակյան 22 շենքի ջրամատակարարումն ապահովող՝ նույն հասցեում կառուցված պոմպակայանի մասնագիտական շահագործումն ապահովելու, նշված շենքի ջրամատակարարման ծառայությունները սահմանված որակի պահանջներին համապատասխան իրականացնելու համար՝ նպատակահարմար է Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող՝ Սիսակյան 22 հասցեում գտնվող պոմպակայանը անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Երևան Ջուր» ՓԲԸ-ին:

Համաձայն Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 44-րդ կետի՝ 2014 թվականին օտարման և (կամ) օգտագործման տրամադրման համար առաջարկվող գույքի ցանկում ընդգրկված է համարվում 2010-2013 թվականների ծրագրերում չընդգրկված և մինչև սույն ծրագրի ընդունվելը և (կամ) ծրագրի գործողության ընթացքում Երևան համայնքի անվամբ գրանցված գույքը, այդ թվում՝ Երևան համայնքի սեփականությանն անցած անժառանգ գույքը, դրա բաժինը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջացել կայացնելու համապատասխան ավագանու որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ առաջանում է Երևան քաղաքի ավագանու որոշման կատարումն ապահովելու մասին Երևանի քաղաքապետի որոշում ընդունելու անհրաժեշտություն:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ